Շուհել

Նպատակ

Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված կանանց շրջանում սեփական կարողությունների նկատմամբ հավատի, անկախության և հոգեբանական ու ֆիզիկական ներուժի վերականգնում նշանակալից և ստեղծարար ձեռնարկատիրական գործունեության, ինչպես նաև զորացնող միջավայրի համատեղ ձևավորման միջոցով:

Գործողություններ

«Շուհել» ձեռագործական խմբակի շարունակական զարգացում՝ որպես կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված կանանց ներուժի բացահայտման հարթակ: Այն կիրականացվի ձեռագործ աշխատանքի և վաստակի միջոցով, ինչպես նաև մշակելով մասնագիտական և սոցիալական նոր հմտություններ, ֆիզիկական ու հոգեկան առողջությանն առնչվող քաջատեղյակություն և այլ կանանց զորացման համար որպես օրինակելի կերպար հանդես գալու կարողություններ:

Ծրագրի նկարագրություն

«Շուհել» խմբակի տեսլականն է սոցիալական հնարավորությունների հավասարությունը և սոցիալական մեկուսացման նվազեցումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով այն կանանց վրա, որոնք հայտնվել են կյանքի դժվարին իրավիճակներում՝ երբեմն զուրկ լինելով պատշաճ բարձրագույն կրթություն, մասնագիտական հմտությունների և ինքնազարգացման, կարիերայի կառուցման ու սոցիալականացման հնարավորություններից: Նմանատիպ անձնական պատմություններ ու խնդիրներ ունեցող կանանց համար 2017թ. ստեղծված քննարկումների փոքր խմբակն աստիճանաբար զարգացավ՝ դառնալով ոգեշնչման ու գոտեպնդման մի յուրօրինակ նախաձեռնություն:

Ընտանեկան կամ սեռական բռնության ենթարկված և իրենց ընտանիքների համար ապրուստի միջոց հայթայթող կանայք, որոնք նաև **«Կանանց ռեսուրսային կենտրոն»**-ի շահառուներն են, այստեղ կարող են կիրառել և զարգացնել ասեղնագործության, կարի, շյուղագործության, զարդագործության, խմորեղենի արտադրության իրենց հմտությունները՝ դրանք վերածելով շուկայում մրցունակ ապրանքների: Բացի արժանապատիվ աշխատանքից ստացվող բավարարվածությունից, այսպիսի սոցիալական ձեռներեցության շնորհիվ նրանք նաև ձեռք են բերում ֆինանսական անկախություն, որը նրանց դարձնում է ավելի ինքնավստահ՝ կյանքի մյուս ոլորտներում ևս սեփական կարողությունների սահմաններն ավելի վճռականորեն ընդլայնելու համար: Սեփական ուժերով եկամուտ ստեղծելով՝ այս կանայք դրական փոփոխություններ են բերում սեփական կյանքում՝ վերափոխելով իրենց անձնական առաջնահերթությունները և կառավարելով սեփական բարօրությունը իրենց նախընտրած ընթացքով ու եղանակներով:
«Շուհել» խմբակի անդամների կյանքի որակը բարելավվում է բազմաթիվ ուղղություններով՝ ինքնարտահայտման համար ապահով տարածքի մաս լինելու գիտակցումից, մինչև ինքնակառավարման կատարելագործման նոր հայացքներ և առողջապահական ծառայությունների հասանելիության ձեռք բերում:

- **Սոցիալական ձեռներեցություն.** «Շուհել» խմբակի անդամները գործում են մեծ եռանդով՝ սեփական եկամտի ապահովման համար: Հիմնականում չունենալով աշխատանքային փորձ և ենթարկվելով տարիքային խտրականության՝ նրանցից շատերը բախվել են աշխատանքի շուկայի անտեսմանը՝ ի վերջո «Շուհել» խմբակում գտնելով այն ապահով հանգրվանը, որտեղ կարող են դրսևորել իրենց տաղանդները: Նրանց արտադրանքը հանրայնացվում ու վաճառվում է տարբեր հարթակներում՝ վայելելով ճանաչում և ոգեշնչելով նորանոր կանանց:

- **Հմտությունների զարգացման աշխատարաններ.** «Շուհել» խմբակի անդամները հնարավորություն ունեն զարգացնելու ու բացահայտելու նոր ստեղծարար ունակություններ արտադրության և վաճառքի ոլորտներում: Նրանք ոչ միայն ձգտում են անհատական և հավաքական գերազանցության, այլև խանդավառությամբ հանդես են գալիս վարպետության դասերով՝ ոգեշնչելով նաև ուրիշների:

- **Սոցիալ-մշակութային միջոցառումներ.** Հաճախակի կազմակերպվող արշավների և հավաքույթների շրջանակներում «Շուհել» խմբակի անդամները վայելում են ազատ ինքնարտահայտման հնարավորությունը՝ վերհանելով բազմաթիվ խնդիրներ, որոնց բախվում են առօրյա կյանքում: Այս անկաշկանդությունից բխող մտերմության շնորհիվ ձևավորում է անպիսի ապահով մթնոլորտ, որտեղ կարելի է կիսվել, սովորել, մտորել և քաջալերել միմյանց՝ առանց քննադատվելու և երկյուղածության:

- **Ուսուցողական քննարկումներ առողջապահության (ներառյալ՝ մտավոր առողջության) ոլորտի մասնագետների հետ.** «Շուհելի» շատ անդամներ ունեն աղքատիկ պատկերացումներ իրենց ֆիզիկական և հոգեկան առողջության կարիքների վերաբերյալ՝ հատկապես նրանց սեռական և վերարտադրողական առողջության առումով: Սրա պատճառները մասամբ թաքնված են հայ հասարակության այն արմատացած ընկալումներում կամ հասարակական կառուցակարգերում, որոնց պատճառով կնոջը վերագրվում է ընտանիքի խնամատարի դերը, ինչը շատ հաճախ ստվերում է նրանց սեփական կարիքները: Սա նվազեցնում է սեփական առողջական խնդիրների մասին նրանց իրազեկվածության մակարդակը, որն, ի վերջո, վտանգի տակ է դնում նրանց առողջությունը պահպանելու կամ վերականգնելու հնարավորությունը՝ երկարաժամկետ հեռանկարում նրանց տկարացնելով որպես հասարակության անդամներ: «Շուհելն» օգտագործում է ցանկացած հնարավորություն՝ հրավիրելու առողջապահության ոլորտի մասնագետների, որոնք փորձում են բարձրացնել անդամների իրազեկության մակարդակը և սեփական առողջության մասին ընկալումները՝ վերարտադրողականից մինչև հոգեկան բարեկեցություն: Բացի այդ, նախագծի առանցքային նպատակներից է բավարար ֆինանսական միջոցների հավաքագրումը՝ Շուելի անդամների համար ապահովելու պարբերական բուժզննումներ, հետազոտություններ ու գնահատումներ, ինչպես նաև բուժումներ՝ ըստ անհրաժեշտության:

Բյուջե

Իր առաջընթացի և անխափան գործունեության համար «Շուհել» ծրագրին անհրաժեշտ է որոշակի ֆինանսական օժանդակություն: Ֆինանսական միջոցները կբաշխվեն հետևյալ ուղղություններով.

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Մ.ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՀ ԴՐԱՄ
• Առողջ սնaՆյութերի գնումներ (թելեր, զարդագործական մասեր, էպօքսիդային խեժ և այլն)	Միանվագ գումար	Միանվագ գումար	1 200 000
• Անդամների ֆիզիկական և հոգեբանական առողջության պահպանություն, բժշկական միջամտություններ	10 հոգի	150 000	1 500 000
• Աշխատարաններ և գործողություններ՝ ուղղված իրազեկության բարձրացմանն ու նոր հմտությունների ձեռք բերմանը	7	20 000	140 000
• Բրենդի առաջխաղացման և մարկետինգի ծախսեր (առցանց և իրական ռեժիմներում)	Միանվագ գումար	Միանվագ գումար	400 000
• Վարչարարական ծախսեր (սոցիալական կամ մշակութային միջոցառումներ, սուրճի ընդմիջումներ)			200 000
• Պետական ռեգիստրում գրանցման և հաշվապահական ծախսեր			300 000
			3 740 000

Փոխարժեքը 2020-ի հունվարի 17-ի դրությամբ՝
1 ԱՄՆ դոլար = 470

ԸՆԴՀԱՆՈՒՐ **դ3 740 000**